Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»(Պ-135-14.01.2022-ՊԱ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	Առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկ (փոփոխություն, լրացում)	Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկի ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	ՀՀ Կառավարություն	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի նախագծի (Պ-135-14.01.2022-ՊԱ-011/0) (այսուհետ՝ Նախագիծ) 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3) ունի Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ժամանակ զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր, 3 կամ որն ընտանիքի միակ արու զավակն է և ունի Հայաստանի Հանրապետության զինված ուժերում կամ այլ զորքերում կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունում	Ընդունվել է	Ընդունվել է

		տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր:»		
ՀՀ Կառավարություն	Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ	«պաշտպանության մարտական գործողությունների կամ» բառերը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է

ՀՀ Կառավարություն	Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	լրացնել «դ» պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «դ. շարքային կազմի պարտադիր զինծառայողները՝ սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված դեպքերում:»:	Ընդունվել է	Ընդունվել է